ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 10.10.2019թ. հ.01/364 գրության՝ տեղեկացվում է, որ քաղաքացի Ռուզան Դաշտոյանը 2018 թվականի հոկտեմբերի 10-ին դիմել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ՝ Դավիթ Բեկի փողոց հ.166/2 հասցեին կից գտնվող բնակելի տան օրինականացման նպատակով չափագրում /տեղագրական հանույթ/ կատարելու խնդրանքով, որն իրականացվել և հանձնվել է քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրման և ձևակերպման գործընթացի աշխատանքային խմբի քննարկմանը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ վերոհիշյալ հասցեի շինության օրինականացման նպատակով իրականացված տեղազննումից և ներկայացված տեղագրական հանույթի ուսումնասիրությունից պարզվել է, որ քննարկվող փոքր մակերեսով շինության /մոտ 35.0քմ/ օրինականացմամբ քաղաքացին նպատակ ունի օրինականացնել իր կողմից զբաղեցրած շուրջ 530.0քմ մակերեսով հողամասը: Հարցի քննարկման արդյունքում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» հ.912-Ն որոշումը վերաբերում է ինքնակամ կառույցների և դրանց սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի օրինականացմանը, փոքր շինություններով ծանրաբեռնված մեծ մակերեսներով հողամասերի տրամադրումը համարվում է անընդունելի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ